

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/3

17 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Սպարտակ Բաղիրյանի 19.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.08.2015 թ-ի թիվ 255 որոշման դեմ:

Սպարտակ Բաղիրյանի գանգատում բերված փաստարկները.

Սպարտակ Բաղիրյանը հայտնում է, որ ունեցել է տաքսի վարելու լիցենզիա տրված տրանսպորտի նախարարության կողմից և վկայական՝ տրված պետական ռեգիստրի կողմից: Ծանր հիվանդության պատճառով 2012 թ-ին պետական ռեգիստրի վկայականը հանձնել է Կենտրոնի հարկային տեսչություն՝ տաքսին վարելու լիազորությունները դադարեցնելու համար: Սակայն, Սպարտակ Բաղիրյանը տեղյակ չի եղել, որ պետք է լիցենզիան նույնպես հանձնել, որի համար որոշվել է իրեն տուգանել 210.832 դրամ:

Սպարտակ Բաղիրյանը խնդրում է հաշվի առնել, որ հանդիսանում է 2-րդ խմբի հաշմանդամ և զիջել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.08.2015 թ-ի թիվ 255 որոշմամբ գանձման առաջադրված գումարը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Սպարտակ Բաղիրյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 26.08.2015 թ-ի դրությամբ Սպարտակ Բաղիրյանի չկատարված հարկային պարտավորությունները պետական տուրքի գծով կազմում է 210.832 դրամ, որից ապառք 74.828 դրամ, տույժ 136.004 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է տարեկան լիցենզիայի պետական տուրքի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 28.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 255 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սպարտակ Բաղիրյանից 210.832 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

1. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է նույն հոդվածի 2-րդ մասի աղյուսակում: Նշված աղյուսակի 16-րդ («Տրանսպորտի բնագավառ») բաժնի (մինչև 27.12.2014թ. գործող խմբագրությամբ) 4-րդ կետով սահմանված է եղել «անհատ ձեռնարկատերերի կողմից մարդապարտ-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում» և «անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ավտոմոբիլներով և կազմակերպությունների կողմից (անկախ ավտոմոբիլների քանակից) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում» լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ («Տրանսպորտի բնագավառ») բաժնի (մինչև 27.12.2014թ. գործող խմբագրությամբ) 15.5-րդ

կետով մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար սահմանված են եղել տարեկան պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝ անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 25-ապարհիկի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ավտոմոբիլներով և կազմակերպությունների կողմից (անկախ ավտոմոբիլների քանակից) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապարհիկի չափով:

Անհատ ձեռնարկատեր Սպարտակ Բաղիրյանին 12.02.2010թ. լիցենզավորող լիազոր մարմնի կողմից տրամադրվել է անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N01724 լիցենզիան, որի տրման համար սահմանված է եղել տարեկան պետական տուրքի դրույքաչափ՝ բազային տուրքի 25-ապարհիկի չափով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (տվյալ դեպքում՝ լիցենզիաների) վրա նշված դրանց տրման ամսաթվից ոչ ուշ: Միաժամանակ, օրենքի 35-րդ հոդվածի (մինչև 01.01.2015թ. գործող խմբագրությամբ) համաձայն՝ նույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին, իսկ 01.01.2015.թ-ից՝ 0.15 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին, որը կիրառվում է ժամանակին չվճարված պետական տուրքի գումարի նկատմամբ՝ դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար: Ընդ որում, պետական տուրքի չգանձված կամ չվճարված գումարների, ինչպես նաև դրանց համար օրենքով սահմանված տույժերի գանձումը կատարվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Քննարկվող դեպքում առկա չէ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածով նախատեսված՝ տարեկան պետական տուրքի պարտավորության դադարման հիմքերից որևէ մեկը և լիցենզիայի տրման համար սահմանված տարեկան հերթական պետական տուրքի գումարները (լիցենզիայի գործողության ժամկետի յուրաքանչյուր տարվա համար բազային տուրքի 25-ապարհիկի չափով) դրանց վճարման համար սահմանված ժամկետներում (մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 12-ը՝ առաջիկա տարվա համար, բացառությամբ 12.02.2015թ. վճարման ժամկետի) չվճարելու համար պետական տուրքի գումարները և դրանց վճարումն ուշացնելու համար հաշվարկված տույժերի գումարների գանձումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով համապատասխանում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

2. 27.12.2014թ. ուժի մեջ են մտել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 20.11.2014թ.

ՀՕ-172-Ն և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 20.11.2014թ. ՀՕ-171-Ն օրենքները, համաձայն որոնց «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի աղյուսակի 2-րդ մասի 16-րդ («Տրանսպորտի բնագավառ») բաժնի 4-րդ և 5-րդ կետերով սահմանվել են «Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում» և «անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում»: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 15-րդ («Տրանսպորտի բնագավառ») բաժնի 15.5-րդ կետով սահմանվել են մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար տարեկան պետական տուրքի նոր դրույքաչափեր՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 100- ապատիկի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի չորսից ավելի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով:

27.12.2014թ.-ից «անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում» լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը փոխարինվել է «անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում» գործունեության տեսակով, իսկ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 20.11.2014թ. ՀՕ-172-Ն և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 20.11.2014թ. ՀՕ-171-Ն օրենքներով անցումային դրույթներ չեն սահմանվել անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաների վերաձևակերպման կամ դրանց գործողության դադարման, ինչպես նաև փարեկան պետական տուրքի դրույքաչափի առումով: Հարկ է նշել, որ 06.01.2015թ. ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 11.12.2014թ. «Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձեվը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N655-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1471-Ն որոշումը, որով սահմանվել է լիցենզավորման ենթակա նոր գործունեության տեսակների լիցենզավորման կարգը, սակայն անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաների մասով անցումային դրույթներ չեն նախատեսվել:

Անհատ ձեռնարկատեր Սպարտակ Բաղիրյանին տրամադրված՝ անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N01724 լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 17.03.2015թ. N93-Ա հրամանով, որով հիմք է ընդունվել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը (լիցենզավորված անձի դիմումի համաձայն):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի համաձայն՝ եթե տարեկան պետական տուրք վճարողը լիցենզիայի գործողության դադարեցման (ուժը կորցրած

ճանաչվելու) համար դիմումը լիազոր մարմին ներկայացնում է հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից հետո, ապա դրա բավարարման դեպքում հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվանից (դիմումում դադարեցման ավելի ուշ ժամկետ նշված լինելու դեպքում՝ այդ օրվանից) սկսած հաշվարկվում է միայն տույժ՝ մինչև գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումի ներկայացման օրը:

Քննարկվող դեպքում մինչև 17.03.2015թ. լիազոր մարմնի կողմից լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելը 12.02.2015թ. վճարման ժամկետով տարեկան հերթական պետական տուրքի պարտավորություն չպետք է առաջադրվեր:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի վերոնշյալ դրույթների կիրառման համար 12.02.2015թ. գործողության մեջ գտնվող լիցենզիայի տրման համար տարեկան պետական տուրքի դրույթաչափի առումով համար պետք է հիմք ընդունվեր օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ կետը, որով բացի նույն հոդվածի 1-18.14-րդ կետերում, ինչպես նաև 19¹-րդ և 19²-րդ հոդվածներում նշված դեպքերից տարեկան պետական տուրքի դրույթաչափը սահմանված է ֆիզիկական անձանց համար՝ բազային տուրքի տասնապատիկի չափով: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածին համապատասխան՝ 12.02.2015թ. վճարման ժամկետով տարեկան հերթական պետական տուրքի պարտավորության առումով պետք է բազային տուրքի տասնապատիկի նկատմամբ հաշվարկվեր միայն տույժ՝ մինչև գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումի ներկայացման օրը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.08.2015 թ-ի թիվ 255 որոշումը:

2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին կայացնել Սպարտակ Բաղիրյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին նոր որոշում, հաշվի առնելով, որ 12.02.2015 թ-ի վճարման ժամկետով տարեկան հերթական պետական տուրքի պարտավորության առումով անհրաժեշտ է հիմք ընդունել բազային տուրքի տասնապատիկը և դրա նկատմամբ մինչև գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումի ներկայացման օրը հաշվարկված տույժը:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ



